թռչող կաքաւին, կարողացայ գետին գլորել նապաստակին իր փախչելու միջոցին, բայց նրանցից միայն երկուսին յաջողեցաւ այդ անել:

Ասլանը ինձ հետ ժամանակ չորոշեց, թէ երբ կը վերադառնայ, այս պատճառով ես շտապում էի շատ չուշանալ, մտածելով, գուցէ նա եկած կը լինէր: Դրա համար մենք վերադարձանք բէկի վրանը, երբ կէսօր էր: Ասլանը դեռ եկած չէր:

Ես շատ սոված էի, բայց ճաշը ուշ տոեցին, որովհետեւ մեր որսած թռչուններից եւ երեներից եւս պէտք էր մի բան պատրաստել. բացի դրանից, սպասում էին բէկի եւ Ասլանի գալուն:

Ես չուզելով անգործ նստել վրանի տակ եւ ինքնակոչ հիւրի պէս սպասել, մինչեւ ուտելու մի բան տային, դուրս եկայ այնտեղից եւ սկսեցի դիմել դէպի փոքրիկ վտակը, որ հոսում էր հովտի միջով:

Կէսօր էր: Այս ժամին հովիւները քշում են ոչխարները վրանների մերձակայ մակաղատեղիներում, ուր գնում են կնիկները եւ աղջիկները կաթը կթելու: Նրանք արդէն իրանց գործը վերջացրել էին, եւ կաթնով լի սափորները գլխների վրայ դրած, վերադառնում էին ոչխարների հանգրոանից: Քիչ էր պատահում, որ այդ աղջիկները կամ մանկահասակ կանայք իմ մօտով անցնելիս, որեւիցէ կատակ կամ սրախօսութիւն չարձակէին դէպի ինձ: Նրանք մի բան էին ասում, եւ առանց պատասխանին սպասելու, ծիծաղելով անց էին կենում: Ես յիմարի պէս նայում էի նրանց ետեւից եւ լուռ էի մնում: — Վերջապէս հանդիպեց նա, որին ես որոնում էի. — Թուլթին, այսպէս էին կոչում այն աղջկան, որ առաւօտեան իմ լոացոելու ժամանակ թողեց իմ մտքում մի կասկածաւոր կարծիք. այժմ նա դառնում էր ոչխարների հանգրոանից, եւ որպէս իր ընկերուհիքը, կաթնով լիքը սափորը գլխին դրած: Նրա հետն էր այն մանկահասակ կինը, որից առաւօտեան լսեցի աղէտալի երգը: Նրանք տեսնելով ինձ, բաժանոեցան իրանց խմբից եւ եկան ինձ մօտ:

— Կաթ կը խմե՞ս, — եղաւ Թուլթիի առաջին խօսքը:

Թէեւ ես սովորութիւն չունէի հում կաթ խմելու, բայց Թուլթիի խօսքը չկոտրելու համար, ընդունեցի նրա հրաւէրը: Նա լեցրուց փոքրիկ փայտեայ գաւաթը, որ իր հետ ունէր, եւ ժպտելով տոեց ինձ:

Նրանք նստեցին վտակի ափի մօտ հանգստանալու: Եւ իրաւ, բաւական յոգնած էին, որովհետեւ հեռու տեղից էին գալիս: Թուլթին սկսեց վտակի սառը ջրով լոանալ իր բորբոքած երեսը եւ յետոյ սրբեց հագուստի դրօշակով: Նրա ուղեկիցը լուռ էր. ցերեկով ես աւելի պարզ կարողացայ նշմարել նրա գեղեցիկ երեսի տխուր գծերը: